

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԵՊՓ

Անգլիայի գաղութ ժողովրդի խնդիրը :

Աս վերջի տարիներս օր օրուան վրայ շատնալու վրայ է Անգլիայէն գաղթած ժողովրդեան թիւը, որոնց մեծ մասը իսլանտացի ու Եւրոպայի ամէն տէրութեանց փոխատականներն են : Աս տարուան յունուարի մէջ 7,749 հոգի . փետրուարի մէջ 11,849 . մարտի մէջ 20,460 : 1851ին բոլանգակ գաղթածներուն թիւը եղած է 196,890 հոգի, ու ասոնց փոխադրութեան համար 607 նաւ գործածուած : 1850ին 106,090, ու 568 նաւ : 1849ին 149,779, ու 565 նաւ : 1848ին 125,504 ու 519 նաւ : Ընդ ամէնը 678,321 :

Բնութեան իւրիշ Դոփ հրաշքի մը :

Աս օրերս փարիզ տասնըվեց կամ տասնըութը տարուան տղայ մը կը գտնուի Կարոլոս Կրանտմանտ անունով, որ որչափ որ մարդուս գուլթը կը շարժէ զինքը տեսնելով, այնչափ ալ կը հիստընէ զմարդ իրեն հանձարովը . ասիկայ ոչ բազուկէ ունի ե ոչ սրունք . բայց կարգէ գուրոյ յարմարութիւն մը ունի գրահաշուի, կամ բարձրագոյն թուաբանութեան . հոս համառօտենք իր պատմութիւնը որ ինքը շինած է : “ Ես ծնած եմ 1835ին յուլիսի 10ին, Էփինալի մէջ . ոչ թե ունիմ ե ոչ ալ սրունք ինչպէս որ կը տեսնէք . ծնանելէս վերջը բժիշկներուն հրամանովը մօրմէս ծածկուած մնայի 15 օր Ամէն մարդ կրնայ գուշակել, թէ այսպիսի խեղճ վիճակի մէջ ծնած ըլլալովս՝ ինչ յոյս կրնայի տալ իմ ծնողացս ու մարդկութեան : Ես աշխատաւոր ու բարեկարգ բայց միանգամայն աղքատ ծնողաց մը որդի եմ . իմ հայրս հիւսն ու մայրս ոստայնանկ ըլլալով հապիւ կրնային ճարել իրենց չորս որդւոցը ապրուստը : Մօրս անչափ խնամքովն ու հոգատարութեամբը հասայ այն տարիքը, որ զգացի առաջին անգամ իմ հանձարոյս զօրութիւնը, որ Աստուած պարգևեր էր ինծի, իմ զգայարանացս պակասութեան ու վատառողջութեան տեղ, որոնցմով հաճեցաւ զիս մահացնել ու տառապեցուցանել : — Մեր քաղքին բըժիշկը՝ որն որ հեծելագնդին բժիշկին հետ իմ ծնանելէս ինչուան նոյն ատեն վրաս խնամք ունեցեր էին, հաճեցան ճամբան շինելու ան տանը ուր որ ես կը բնակէի . ե ան ատենը մէկուկէս լիպրէ կը կշռէի զգեստներս ալ մէկտեղ առած :

Երբեմն երբեմն կուգային ինծի ե գիտնալով մտաւոր հաշիւներու յարմարութիւն ունենալս՝ ինծի հարցմունքներ կրնէին սկզբան պարզ, ու երթալով խրթին հաշիւներ իմ հօրս վաստակին վրայ, ու նաև գրահաշուի խնդիրներ : Աս կերպով, առանց բան մը սորովելու կը լուծէի յան .

1 ՏՃ . 2-րդ :

պատրաստից ինչ որ գրահաշուի խնդիր կը հարցնէին

Ան բժիշկներն ու գիտնականները որ մեր տունը կուգային՝ խորհուրդ տուին իմ հօրս որ զիս մեր գաւառին ամենէն աղէկ ուսումնարանին ներկայացնէ, ինչպէս որ ըրաւ ալ . հոն ըրած յառաջագիմութեամբս սիրտ առած, երբոր հայրս մեռաւ որոշեցի փարիզ երթալ որ ուսմանց կեդրոնն է :

Բազդ ունեցայ աս անցած մարտի 19ին փարիզի Ակադեմիային գիմնը ելլելու իմ մտաւոր կարողութիւններս ցուցնելու . ե հիմա ան ուսումնականաց միաբերան ցուցուցած լուս համարմունքներնէն քաջալերուած, պատիւ ունիմ ծանուցանելու հասարակութեան՝ որ ամէն օր կէս օրուէն ժամը ինչուան հինգ Մոնմարթրի մարտկոցը արհեստագիտական մտաւոր գրահաշուի փորձեր կ'ընեն, ու խիստ քիչ առաջարկութիւն կրնայ ըլլալ որ ես մէկէն չկարենամ լուծել առանց օգնութեան մը կարօտութիւն ունենալու . . . :

Եւ յիշաւ իր փորձերը կը սկսի մարտի 25ին բազմութեան առջև . ու ինչպէս որ ամէնը միակերպ կը հաստատեն իրեք ժամ անընդհատ աս պատանոցս խրթին հարցումներ կ'ըլլուի գրահաշուի վերաբերեալ, ու ամէնքն ալ նոյն վայրկեանին կը լուծէ, գրեթէ ելքարական արագութեամբ : 12ով ու 14ով բազմապատկելու 20, 25 թուանչառով գուճարի մը արտագրեալը մէկէն գտեր է քիչ մը կենալէն վերջը, որ գրուածքով գոնէ քառորդ մը պէտք է : — Մարդուն մէկը կ'աղաչէ որ ինի վրայ բաժնուելու ամենամեծ գուճարի մը, որ ինչուան վեցամիլիոնի կը հասնէր, աւելցածը զուրցէ : գրեթէ գեռ ինքը ըսելը չմընցուցած, աղան պատասխանեց լուր : Զարմանալի է աս տղուն արագամտութիւնն ու սրամտութիւնը, ան աստիճան որ գեռ ինչուան հիմա շատ երեւելի գրահաշիւներէ չլուծուած առաջարկութիւնները անկարծելի կերպով կը լուծէ ասիկայ : Հիանալի է այսպիսի թերակատար արարածի մը վրայ ասանկ խեղճ մտքէ վեր հանձարը :

Գաղտնի ծեր-հասի ծեր-հի անգառնել :

ՀԻՄԱՅՈՒՆ Գաղղոյ ծերակոյտը որ 40 հոգիէ կը բաղկանայ 14 ծերունի անգամ ունի 70էն ինչուան 79 տարեկան : Ժերարտ մարաշխա 79 . Կարոլոս Սաբէյ 77 . Լըպրեօն Գուքս փաշէնցայի 77 . Էքսէլման Մարաշխա 76 . Փրէվալ թերակոմս 76 . Լուգովիկոս փուէնա 75 . Պէլլէ 75 . Յովսէփ փորթալիս 74 . Ալբրիկի Գուքս Պատիոնի 74 . Ապարտ Պարոն 74 . Լէցայ կոմս 72 . Կոթիէ 71 . Ռուսսէն Պարոն 71 . Սէն-Սիմոն Գուքս 70 :